«Երևանի Լեոնիդ Ազգալդյանի անվան համար 200 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիր

/2021-2026/

Կազմեց ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ Եսայան Տաթևիկը

Բովանդակություն

1. Նախաբան ---------- 3-4

2. Դպրոցի անձնագիրը ---------- 5

3. Դպրոցի առաքելությունը ---------- 6-8

4. Իրավիճակի վերլուծությունը ---------- 9

5. Դպրոցի զարգացման ուղղությունները, ---------- 10-12
ակնկալվող արդյունքները

6.Դպրոցի զարգացման ծրագրի նպատակը ---------- 13-14

7. Դպրոցի զարգացման ծրագրի հիմնախնդիրները ---------- 15-22

8.Ծրագրի ֆինանսավորման ապահովումը _____ 23-24

9.Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ---------- 25
ռիսկերը և ազդեցությանն ուղղված գործողությունները

10. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման ---------- 26-27
չափանիշները, վերահսկողությունը

11. Դպրոցի կառավարման արդյունավետության ---------- 27-28
բարձրացումը

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք :
/ՀՀ Սահմանադրություն, հոդված 39/

ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար: «Երևանի Լեոնիդ Ազգալդյանի անվան համար 200 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի զարգացման 2021-2026 թթ. ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին, «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագիր», փաստաթղթերի հիմնադրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է: Հանրակրթության բարեփոխումները և առաջանցիկ զարգացումները դառնում են անհրաժեշտ և անխուսափելի, աճում է հանրակրթության դերը, որի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և

համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

<u>Դպրոցի անձնագիրը</u>

- 27.01.2003 թվականին «Երևանի Լեոնիդ Ազգալդյանի անվան համար 200 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 19.11.2012 թվ-ին, փոփոխությունները գրանցվել են 20.10.17թ-ին և 14.08.2019թ-ին

- Դպրոցը տիպային շենք է
- Դպրոցում առկա են՝ դասասենյակներ /43/, առարկայական կաբինետներ /8/, գրադարան, մարզադահլիճ /2/:
- Դպրոցն ունի 78 մանկավարժ, և 22 ուսումնաօժանդակ համակազմ :
- ՆԿ ծրագրում ընգրված է 32 աշակերտ:
- Աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 1293:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի
ապագայի մտապատկերն է:

Առողջ սերունդ, քաղաքացիական առողջ հասարակություն ձևավորելու գործում շատ կարևոր է դպրոցի դերը: Հասարակության զարգացման ներկա փուլը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Երեխայի իրավունքների հիմնական բաղկացուցիչներից է կրթություն ստանալու ապահովումը: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտությամբ կարող է իրականացվել ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն այսօր շատ է կարևորվում որակյալ կրթությունը և դաստիարակությունը: Կրթության բնագավառի գերխնդիր այսօր շարունակում է մնալ կրթության որակի բարձրացումը, որը կապահովի ապագա արժանավոր քաղաքացու ձևավորում: Մեր դպրոցի առաջնային խնդիրն է աշակերտների մեջ դաստիարակել հայրենասիրություն, սեր, հայրենի եզերքի, նրա մարդկանց, ավանդույթների և արժեքների նկատմամբ: Հարգալից վերաբերմունք լեզվի և մշակույթի նկատմամբ: Գիտակցեն, կրեն և գիտակցելով պահպանեն դարերի խորքից եկած հայի տեսակը: Կարողանալ դաստիարակել ինտելեկտուալ բարձր հնարավորություններ ունեցող վաղվա քաղաքացիներ, որոնք, գիտելիքի լույսը կրելով իրենց մեջ, կդառնան հուսալի հենարան հայրենիքի համար, ինչն էլ կլինի դպրոցի, մանկավարժական հանրույթի փոքրիկ ներդրումը հայրենիքի հզորացման գործում:

Վերոնշյալ առաջաներթություններով պայմանավորված դպրոցի զարգացման հիմնական նպատակներն են՝

- յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման,
- հանրակրթության պետական չափորոշչին և հանրակրթական պետական ծրագրին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրության,
- յուրաքանչյուր սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը և ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայրի ապահովման

- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, հակումներն ու ընդունակությունները, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Լեոնիդ Ազգալդյանի անվան համար 200 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները: Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան , ➢ Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը, ➢ Կառավարման և խորհրդակցական մարմինները, ➢ Աշակերտական համակազմը, ➢ Մանկավարժական համակազմը, ➢ Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, ➢ Ուսումնական միջավայրը	➢ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը, ➢ Ձեռնարկատիրական գործունեության սակավությունը կամ պասիվությունը, ➢ Համայնքի հետ համագործակցության բազմակողմանի ծրագրերի բացակայությունը, ➢ Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների թվի պակասը, ➢ ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակը:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. Մանկավարժական համակազմի որակական բարելավում

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը և պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացմանը:
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավմանը:
- Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
- Շահագրգռել մանկավարժներին կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

Սպասվող արդյունքները

- Մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում:
- Մեթոդական, ուսումնամեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում:
- Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում:
- Մանկավարժների մեթոդական մշակումների մրցունակության ապահովում:
- Մանկավարժների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:

II Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման առումով իրականացնել հետևյալ խնդիրները

- Սովորողների ուսուցման և դաստիարակության զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
- Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
- Մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովումը:
- Սովորողներին շահագրգռել հետազոտական աշխատանքների կատարման, նրանց համար վարչական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:

Սպասվող արդյունքները

- Դպրոցի կրթական քաղաքականության նորմատիվային ամրակայում՝ հիմնարար կրթական ծրագրի ձևով:
- Ուսումնական պլանի համակարգված մեթոդական և դիդակտիկ ապահովվածություն:
- Մեթոդական և դիակտիկ նյութերի ընտրության ու մշակումների ուղղությամբ մանկավարժների միասնական մոտեցումների ապահովում:
- Սովորողների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:
- Էլեկտրոնային շտեմարանային պաշարների ստեղծում և/կամ համալրում. մեթոդական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում

III Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը

Դպրոցում համապատասխան կրթադաստիարակչական միջավայրի ստեղծումը կնպաստի սովորողների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:

Հիմնական նպատակները

- Ապահովել որակյալ կրթություն՝ կրթական միջավայրի հետազոտման և բարելավման միջոցով:
- Առողջության պահպանման տեխնոլոգիաների ներդրում:
- Կրթության նորացված բովանդակության մշակում և ներդրում:
- Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում՝ մանկավարժների մասնագիտական կրթության առանձնահատկություններն ապահովելու և ուսումնական գործընթացն ակտիվացնելու համար:
- Մասնակցություն տարբեր մրցույթների:
- Տարեկան գործունեության վերաբերյալ ամենամյա հանրային հաշվետվություն:
- Երեխաների առողջության մասին տեղեկատվություն:
- Բոլոր ուսուցիչների կողմից դասապրոցեսին համակարգչի օգտագործման ապահովում:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ռազմավարական գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:

Իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանել զարգացման ծրագրի նպատակները: Նպատակը որոշակի ժամանակահատվածում իրականացվող գործունեության սպասվող արդյունք է, այն է ինչին ձգտելու ենք հասնել:

<u>Դպրոցի զարգացման ծրագրի նպատակներն են՝</u>

- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում
- Դպրոցի կաբինետների, լաբորատորիաների կահավորում
- Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում
- Կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում
- Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում
- Սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում
- Սովորողների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդում, ազգային և համամարդկային արժեքների պահպանում և զարգացում
- Սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում

- Աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործում
- Սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում
- Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում
- Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում
- ՏՀՏ կիրառումը դասապրոցեսում՝ ուսման որակի բարձրացման նպատակով
- Կրթության մատչելիության ապահովում, դպրոցում այնպիսի հոգեբանա-մանկավարժական միջավայրի ձևավորում,որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ,մրցունակ
- Դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմախնդիրների լուծման եղանակը դպրոցի զարգացման ծրագրի միջուկն է, այն գաղափարն է բովանդակության որոշման համար: Որպես կանոն, եղանակները

կարող են լինել մի քանիսը: Կարևոր է ընտրել խնդրի լուծման ռացիոնալ /օպտիմալ/ տարբերակը:

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ռազմավարական ծրագիր, առաջ քաշել հիմնախնդիրներ, որոնք հնարավորություն կտան համեմատաբար փոքր ներդրումներով տալ առավելագույն արդյունք և նպատակաուղղված ձևով հասնել դպրոցի առաքելության իրականացմանը:

Դպրոցի հիմնախնդիրներն են

Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացում

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքների որակական բարելավումը:
- Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
- Կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ՏՀՏ կիրառման ուղղությամբ
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար

Կրթության որակի բարձրացման միջոցառումներ

Կրթության որակի բարձրացման համար կատարվել է և կատարվում են բազմաթիվ կազմակերպչական, ուսումնական, ռազմահայրենասիրական, դաստիարակչական բնույթի միջոցառումներ, սակայն այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է նաև՝

- Կրթության որակի բարձրացումը դպրոցում՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:
- Հարստացնել առկա ուսումնամեթոդական բազան: Ձեռք բերել ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցեր, գեղարվեստական, գիտական գրքեր, ատլասներ, քարտեզներ
- Մեծ ուշադրություն դարձնել պրակտիկ ունակությունների զարգացմանը, հմտությունների մշակմանը, սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակությանը
- Լայնորեն կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ, սլայդներ, տեսաժապավեններ, պլակատներ, աղյուսակներ, մուլյաժներ, գործիքներ, նյութեր
- Կիրառել իրավիճակային խնդիրներ, թեստեր, դերային խաղեր, խաչբառեր, խճանկարներ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ստուգատես մրցույթներ և այլ մեթոդներ.
- Համալրել համակարգչային դասարաններ,ստեղծել ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած կաբինետներ,
- Մանկավարժական կազմի դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, դասախոսություններ, հարցազրույցներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ, մեծ ուշադրություն դարձնել դասավանդողների գնահատման ընթացակարգի կիրառմանը:

<u>Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում</u>

- Դպրոցի նորմատիվային ամրապնդում դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
- Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
- Ուսուցման կազմակերպում՝ազգային գաղափարախոսության հենքի վրա.
- Մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում:
- Սովորողներին շահագրգռել հետազոտական աշխատանքներ կատարելու համար, հետազոտությունների կազմակերպման և իրականացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել
- Սովորողների համար ստեղծել առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ
- Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ շուկայական պահանջներին համապատասխան
- Սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, սեր ուսման և աշխատանքի նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ, հավատ ապագայի հանդեպ, ձգտում իրավական հավասարության

<u>Նյութատեխնիկական բազայի հարստացում</u>

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Գտնել հովանավորներ, բարերարներ, ստեղծել հոգաբարձուների խորհուրդ լրացուցիչ միջոցներ ձեռքբերելու նպատակով:

- Նյութատեխնիկական բազայի մշտական հարստացում,
- Ուսումնանյութական բազայի անընդհատ հարստացում,
- Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում և/կամ թարմացում
- Լրացուցիչ միջոցներ գտնել նոր գույք ձեռքբերելու համար

- Սպորտգույքի ձեռքբերում

Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացումը

ա) Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում:

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով՝

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում
- Կրթության պետական կառավարման մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
- Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում
- Բյուջեի ճիշտ պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը
- Ֆինանսական եռամսյակային հաշվետվությունների քննարկում, առաջարկությունների իրականացման համար միջոցների ներդրում
- Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար:

բ) Ծնողական խորհուրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահությանը: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում:

Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում:

- Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում
- Մասնակցել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին
- Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը
- Աջակցել ծնողական խորհուրդի աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում: Այդ նպատակով ճշտել՝
    - միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը,
    - զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
    - հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվություն,
    - ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը,
    - միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները,
    - աշակերտների թիվ, որոնց ծնողները հաշմանդամ են,
    - կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը,
    - ծնողներին պետք է մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝այդ գործում ներգրավելով հովանավորների,
    - ծնողներին ներգրավել իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին,

- ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ:

գ) **<u>Աշակերտական խորհուրդի հետ համագործակցության բարելավում</u>**

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Նրանց մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, որպեսզի աշակերտները կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը:

- Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետությունը:
- Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:
- Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտների ինքնավարության միջոցով:
- Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտմամբ:
- Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները:
- Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:
- Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթություն ստանալու իրավունքը և ինքնակրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:

դ) <u>Հոգաբարձուների խորհուրդի ձևավորում</u>

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի հոգաբարձուների խորհուրդը:

- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:
- Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների
- Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը
- Հոգաբարձուների խորհուրդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն
- Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր: Դպրոցի ֆինանսավորումը հիմնականում բավականացնում է աշխատավարձի, հարկերի, կոմունալ, գրենական, տնտեսական ծախսերի վճարմանը: Շատ հաճախ դպրոցի խնդիրները առաջանում են հենց ֆինանսական միջոցների պակասից: Ուստի անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել և կատարել իրատեսական պլանավորում, պետք է հստակ պատկերացնել իրականացման մեխանիզմները և հնարավորությունները: Նախահաշիվը կազմելիս անհրաժեշտ է ծախսերը ճիշտ պլանավորել, հավանություն ստանալ խորհրդի և հիմնադիրի կողմից:

Դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից: Պետական բյուջեից ֆինանսավորումը կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից:

Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով.

1.իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար,

2.իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և(կամ) այլընտրանքային ծրագիր,

3.կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ,

4.ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ ստանալ լրացուցիչ ֆինանսավորում նաև այլ նպատակներով:

Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Ստացած շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով: Դպրոցում կարելի է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1.լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում,

2.արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,

3.համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,

4.սովորողների սննդի կազմակերպում,

5.ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է՝ առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված դպրոցի զարգացման ծրագիրն անգամ դժվար է իրականացնել, քանի որ այն լիովին չի կարող արձանագրել ակնկալվող արդյունքները:

N	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
1	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով
2	Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, հոգաբարձուների խորհրդի ձևավորում, գտնել հովանավորներ, բարերարներ
3	Դպրոցի նյութատեխնիկական բազայի մշտական արդիականացման հնարավորությունը	ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում, լրացուցիչ միջոցների հայթայթում
4	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը
5	Դպրոցի հարակից տարածքի, բակային պայմանների բարելավում	Դիմել համապատասխան մարմիններին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագրին իրականացնող ու վերահսկող շահառուները (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները)՝ գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

1.Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:

2.Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը:

3.Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:

4. Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

<u>Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում</u>

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները: Հիմքում դնելով մարդասիրության, ժողովրդավարության սկզբունքը: Այն դպրոցի կառավարումը կդարձնի ավելի

թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց աշխատանքի ադրյունավետությունը: